

1915-1916 ԹԹ. ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՇՈՒՐՁ

Կայսերական Գերմանիան Հայոց մեծ եղեռնի ամբողջ ժամանակաշրջանում օսմանյան կառավարության ցեղասպան քաղաքականության հանդեպ իր որդեգրած հանդուրժողականությունը փորձում էր «հիմնավորել» գերմանա-թուրքական դաշինքով, որի խզումը Գերմանիայի կողմից ի նպաստ հայերի կոշտ միջամտության դեպքում, իբր թե, անխուսափելի կլիներ: Երբ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը 1915 թ. սեպտեմբերին՝ Կ. Պոլսից Բեռլին վերադառնալուց հետո, արտգործնախարարությունից պահանջեց անհապաղ ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ արևմտահայության զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները կասեցնելու համար, պետքարտուղարի տեղակալ Արթուր Յիմերմանից ստացավ հետևյալ պատասխանը. «Ի՞նչ կարող ենք մենք անել: Թուրքիայի հետ մեր միությունը Թալեթի, Էնվերի և Խալիլի վեց ձեռքերի մեջ է պահվում: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»¹:

Թուրքական կառավարության ցեղասպան քաղաքականության հանդեպ Գերմանիայի հանդուրժողականությունն այդ նույն պատճառաբանությամբ էր փորձում արդարացնել նաև արտգործնախարարության պետքարտուղար ֆոն Յագովը 1916 թ. սեպտեմբերի 29-ին ռայխստագի պատգամավորների առջև ունեցած իր ելույթում: «Ես կարող եմ միայն ասել,- հայտարարում էր նա,- որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք: Ամենաձայրահեղը, որ մեզ դեռ մնում էր, Թուրքիայի հետ դաշինքի խզումը կլիներ... Թուրքերը մեզ կարևոր ծառայություններ են մատուցում՝ պաշտպանելով մեր հարավարևելյան դիրքային թևը: Դուք ինձ հետ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռուն գնալ, որ թուրքերի հետ, որոնց՝ Հայկական հարցին վերաբերող մեր տևական նախազգուշացումներով մենք խիստ անտրամադիր ենք դարձրել, նաև մեր դաշինքը խզենք»²:

Նախ անդրադառնանք այն հարցին, թե Յագովն ինչ նկատի ուներ՝ ասելով, թե գերմանական կառավարությունն արել էր այն ամենը, ինչ կարող էր, և արդյո՞ք դա համապատասխանում էր իրականությանը:

¹ Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1919, S. XXII.

² Lanne P., Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, S. 146: Հմմտ. Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, S. 294:

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանության վերաբերյալ առաջին տեղեկությունը, որն Օսմանյան կայսրությունում հավատարմագրված Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմը հաղորդել էր Բեռլին 1915 թ. մայիսի 31-ի թվակիր հեռագրով, հետևյալն էր. «Հայկական լրտեսության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունները կանխելու նպատակով Էնվեր փաշան նպատակադրվել է, պատերազմական դրությունն օգտագործելով, հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունը կասեցնել, հայկական թերթերը փակել և այժմ ապստամբած հայկական կենտրոններից բոլոր ոչ անառարկելիորեն անմեղ ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձագին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումները, իհարկե, մեզ թշնամի ամբողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների տեղիք կտան և նաև կշահարկվեն մեր դեմ: Միջոցառումները, անշուշտ, մեծ խստություն են ենթադրում նաև հայ ազգաբնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավասու ենք մեղմացնելու դրանց կիրառման ձևերը, բայց ոչ հիմնովին արգելելու: Ռուսաստանից սնուցվող հայկական սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը: Խնդրում եմ դր. Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին համապատասխանաբար հայտնել, որ Թուրքիայի համար ստեղծված քաղաքական և ռազմական իրավիճակում, ցավոք, նշված միջոցառումներից խուսափել հնարավոր չէ»¹:

Այս փաստաթղթում խնդրո առարկա հարցի առումով կարևորվում են հետևյալ իրողությունները. նախ՝ հայերի տեղահանության թուրքական ծրագիրը ներկայացվում է խիստ մասնակի և խեղաթյուրված, ինչը պայմանավորված էր կամ Էնվերի և կամ հենց իր՝ դեսպանի ապատեղեկատվությամբ. երկրորդ՝ օսմանյան կառավարությունը նախապես լրջորեն հաշվի էր առել այն հանգամանքը, որ Գերմանիան կարող էր այդ հարցում իրեն խոչընդոտել, և երրորդ՝ անձամբ դեսպանը լիովին հանդուրժողական դիրքորոշում էր որդեգրել հայերի տեղահանության թուրքական ծրագրի հանդեպ, և այդ առնչությամբ նրան մտահոգում էր ոչ թե տեղահանվող մարդկանց ճակատագիրը, այլ հակառակորդ երկրների կողմից թուրքական կառավարության գործողությունները Գերմանիայի դեմ շահարկելու հնարավորությունը:

Հենց այդ վերջին հանգամանքը նկատի առնելով՝ Վանգենհայմը հետագա շաբաթներին և ամիսներին, երբ հայերի կոտորածներն ու տեղահանությունները զանգվածային բնույթ էին ստացել, պարբերաբար հանդես էր գալիս Բարձր Դռանն ուղղված ամուլ նախազգուշացումներով, որոնք, ինչպես էինքը ևս հավաստում էր, գլխավորապես թելադրված էին վերոնշյալ շահարկումներին հակադրելու նպատակադրումով: «Թուրքական ձեռնարկումնե-

¹ Deutschland und Armenien..., S. 79.

րին մեղսակից լինելու առնչությամբ մեր թշնամիների կողմից հետագայում մեզ ուղղվելիք հավանական մեղադրանքներին հակազդելու համար,- նշում էր նա կանցլերին հղած՝ 1915 թ. հուլիսի 7-ի թվակիր նամակում,- ես անհրաժեշտ եմ համարել Բ. Դռան ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ մենք հայ բնակչության աքսորին միայն այն դեպքում ենք հավանություն տալիս, եթե այն թելադրված է ռազմական նկատառումներով և ծառայում է ապստամբությունների կանխարգելմանը, և որ, սակայն, այդ միջոցառումների իրագործման ժամանակ աքսորյալներին անհրաժեշտ է պաշտպանել թալանից ու կոտորածներից: Այդ հարցապնդումներին անհրաժեշտ շեշտադրում տալու համար ես իմ առարկությունները կազմել եմ գրավոր հուշագրի ձևով, որն այս ամսի 4-ին անձամբ հանձնել եմ Մեծ վեզիրին»¹:

Ուշագրավ է, որ Վանգենհայմը միևնույն նկատառումով էր հիմնավորում նաև երիտթուրքերի ոճրագործություններին վերաբերող նյութերի առաքումն արտգործնախարարություն՝ դրանք համարելով հետագայում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ հնարավոր մեղադրանքները հերքելու փաստարկներ: «Եթե ես վերջին շրջանում այդ իրադարձությունների մասին Ձերդ Գերագանցությանն ավելի մանրամասն եմ տեղեկացրել,- նշում էր նա Բեթման Նոլվեգին ուղղված իր՝ 1915 թ. հուլիսի 16-ի թվակիր նամակում (կից առաքելով նաև փոխհյուպատոս Կուկհոֆի՝ Սամսուկի դեպքերին առնչվող տեղեկագիրը),- ապա դա արվել է նաև փոխհյուպատոս Կուկհոֆի կարևորած այն հանգամանքի հաշվառումով, որ մեր թշնամիները դրանց կապակցությամբ հետագայում մեզ որոշակի մեղսակցություն կվերագրեն: Նրա տեղեկությունների հիման վրա մենք ի վիճակի կլինենք թշնամի աշխարհին հատկապես մամուլի միջոցով ցանկացած ժամանակ ապացուցել, որ մենք մշտապես դատապարտել ենք թուրքական կառավարության չափազանց հեռահար միջոցառումները և շատ ավելի՝ նաև տեղական մարմինների անկարգությունները»²:

Ինչպես ապացուցում են Վանգենհայմի վերոնշյալ և այդօրինակ մյուս տեղեկագրերը, նա ևս միանգամայն անտարբեր էր հայ ժողովրդին վիճակված ողբերգությունների հանդեպ, և եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեսպանները, իրենց պետության արտաքին քաղաքականության անմիջական իրագործողները լինելուց զատ, որոշակի ներդրում ունեն նաև այդ քաղաքականության ձևավորման հարցում, ապա Վանգենհայմի պաշտոնավարությունը հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարելի էր համարել ճակատագրի հերթական դաժան խաղը: Նրա ամենաուշագրավ

¹ Տե՛ս համացանցում՝ Revidierte Lepsius-Edition. Wolfgang Gust (Hg.) 1915-07-07-DE-001-V փաստաթուղթը, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset>: Նամակին կից հավելվածում տե՛ս նաև հուշագիրը: Նույն տեղում:

² Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, S. 157:

գնահատականներից մեկը թերևս տվել է Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Շենրի Մորգենթաուն: «Շենց որ առաջին լուրերը Կոստանդնուպոլիս հասան,- նշում էր նա,- ինձ համար պարզ էր, որ հայերին օգնելու ամենաճիշտ ձևը ոճրագործությունների դադարեցումն էր, որը հնարավոր կլիներ բոլոր երկրների ներկայացուցիչների վճռով թուրքական կառավարությանը կոչ անելու դեպքում: Մարտ ամսի վերջին ես այցելեցի Վանգենհայմին: Մակայն ինձ համար պարզ դարձավ հայերի հանդեպ նրա ասելությունը: Նա սկսեց հայերին ամեն առիթով դատապարտել: Էնվերի և Թալեաթի նման, նա ի դեմս Վանի դեպքերի, ապստամբություն էր տեսնում: Նրա կարծիքով հայերը միայն դավաճան մակաբույծներ էին: «Ես կօգնեմ սիոնիստներին, բայց ինչ էլ որ լինի, հայերին չեմ օգնի», - ասաց նա»¹:

¹ Տե՛ս **Morgenthau H.**, Ambassador Morgenthau's story, Garden-City-New York, 1918, p. 370: Հմնտ. **Օհանջանյան Ա.**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 215-216: Իսկ թե Մորգենթաուն որքան դատապարտելի էր համարում հայերի ճակատագրի հանդեպ Գերմանիայի դեսպանի անտարբերությունը, վկայում է նաև հետևյալ դրվագը, որով, ի դեպ, միաժամանակ պարզաբանվում են Վանգենհայմի հանկարծահաս մահվան հանգամանքները. 1915 թ. հոկտեմբերի 23-ին նրանք մի հանդիպում են ունենում Կ. Պոլսի ամերիկյան դեսպանությունում, որի ժամանակ Մորգենթաուն հայերի կոտորածները բնութագրում է՝ իբրև «երկինք աղաղակող հանցագործություն»՝ դատապարտելով դրանց հանդեպ դեսպանի ցուցաբերած անտարբերությունը: «Կրկին խօսեցանք տարագրություններում վրայ,- նշում էր Մորգենթաուն,- Գերմանիա ատոնց պատասխանատու չէ, ըստ Վանկենհայմ: Դուք կրնաք յախտեսն պնդել ատոր վրայ, պատասխանեցի, բայց ո՛չ մեկը չպիտի հաւատա: Աշխարհ շարունակ պատասխանատու պիտի նկատե Գերմանիան. այդ ոճիրներուն մեղքը մշտնջենապէս ձեր դատապարտությունը պիտի ըլլայ: ... Ես չեմ պնդեր, որ՝ Գերմանիա պատասխանատու է այդ ջարդերուն՝ այն իմաստով, որ ինք եղած է անոնց դրդիչը: Բայց Գերմանիա պատասխանատու է այն իմաստով որ՝ ինք կարող էր ջարդերը դադարեցնել և չգործածեց այդ ուժը: Եւ միայն Ամերիկա եւ ներկայի ձեր թշնամիները չեն, որ ձեզ պատասխանատու պիտի բռնեն: Օր մը գերման ժողովուրդն է, որ ձեր կառավարութիւնը հաշիւի պիտի կանչէ: ... Այս տեսակ ոճիրներու աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանայ...: Թիւրքիայի ներքին գործերու ներկայ վիճակին մէջ չպիտի միջամտեմ, պատասխանեց Վանկենհայմ: Տեսայ որ՝ անօգուտ էր նիւթը աւելի երկար ծեծել: Գորովանք է մարդկային գուրթ գուրկ մարդ մըն էր ան. զգուանքով երեսս անդին դարձուցի: Վանկենհայմ ոտքի ելաւ մեկնելու: Ցցուելուն պէս՝ շունչը բռնուցեցավ եվ յանկարծ ծունկերը կթոտեցան: Ցատկեցի եւ զինքը բռնեցի ճիշդ այն պահուն՝ երբ իյնալու վրայ էր: Պահ մը բոլորովին շլմորած մնաց, ցնորած կերպարանքով մը ինծի կը նայեր. յետոյ անմիջապէս ինքզինքը ժողվեց եւ իր հաւասարակշռութիւնը վերագտաւ: ... Երկու օր ետքը, ճաշասեղան նստելու ատեն կարուածի հարուած մը կունենայ: Վեր՝ իր անկողինը կտարուի, բայց ալ գիտակցութիւնը չի վերագտնէր: Հոկտեմբերի 25-ին պաշտոնապէս ծանուցուեցավ ինծի, թէ Վանկենհայմ մեռած էր: Վանկենհայմէն իմ վերջին յիշատակս եղավ ան, երբ դեսպանը ամերիկեան դեսպանատունի իմ գրասենյակս նստած, բացարձակապէս կը մերժեր որնիցէ ազդեցութիւն բանեցնել՝ ազգի մը ջարդուիլը արգիլելու համար: Ինք այն միակ մարդն էր՝ որ կրնար դադարեցնել այդ ոճիրները, և իր կառավարութիւնը՝ այդ բանին կարող միակ կառավարութիւնը, բայց Վանկենհայմ շատ անգամներ ըսած էր ինծի. «Մեր միակ նպատակակէտն է այս պատերազմը շահիլ»: Մորգենթաուի և Վանգենհայմի զրույցի ամբողջական տեքստը տես **Մորգենթաու Հ.**, Ամերիկյան դեսպան Շենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 317-320: Կարելի է ենթադրել, որ Մորգենթաուի հետ հանդիպման ժամանակ

Վանգենհայմի մոտեցումը սկզբից նեթ որդեգրեց նաև նրա կառավարությունը, որը, մի կողմից հիմք ընդունելով Բարձր Դռանը դեսպանի ներկայացրած վերոնշյալ ամուլ առարկությունները, հայտարարում էր, թե հայերի դրությունը բարելավելու համար անում էր հնարավոր ամեն բան և մյուս կողմից բացառում էր Գերմանիայի կոշտ միջամտության հնարավորությունը՝ պնդելով, թե դա կհանգեցնե՞ր դաշինքի խզմանը: Ներկայումս հրապարակված փաստաթղթերը, սակայն, փաստում են, որ կոշտ միջամտության դեպքում գերմանա-թուրքական դաշինքի լուծարման՝ պաշտոնական Գերմանիայի վերոնշյալ պատճառաբանությունը միանգամայն սնանկ էր: Դրա լավագույն ապացույցը Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսի վարքագիծն է, որը 1916 թ. նոյեմբերին զենքի գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելել է աքսորել Չմյուռնիայի հայ բնակչությանը՝ դա հիմնավորելով հենց նույն ռազմավարական նկատառումներով, որոնց քաղաքական շահարկմամբ երիտթուրքերն իրականացնում էին հայերի բնաջնջումն ու տեղահանությունը: «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին, ուղարկեցի կուսակալի մոտ, - նշում էր այդ առթիվ գեներալը Կ. Պոլսում գերմանական դեսպանությանն ուղղած իր տեղեկագրում, - և կարգադրեցի նրան ասել, որ այլևս չէի հանդուրժելու նման գանգվածային ձերբակալությունները և տեղահանությունները, որոնք կատարվելու էին թշնամու սպառնալիքի տակ, ռազմական տարածաշրջանում գտնվող մի քաղաքում, իսկ եթե, այնուամենայնիվ, ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես կուսակալին մինչև կեսօր ժամանակ տվեցի վճիռ կայացնելու համար: Չմյուռնիայում հրամանատարող գեներալ Թրոմերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայրը Պրիդգեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1.30-ին մայրը Քյազիմ բեյը կուսակալի մոտից (որը Բուռնաբաղում էր) վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու տեղահանությունները դադարեցվել էին և այլևս չէին շարունակվելու»¹:

Եթե այդ բարձրաստիճան զինվորականը սեփական նախաձեռնությամբ կարողացավ դա անել, ապա ինչպիսի նշանակալից արդյունքների կարող էր հանգեցնել գերմանական կառավարության ազդեցիկ ճնշումը: Հատկանշա-

Վանգենհայմը սրտի նույնպե՛ս է ունեցել, որը կրկնվել է նաև երկու օր անց՝ դառնալով նրա մահվան պատճառը:

¹ Deutschland und Armenien..., S. 312-313 (թիվ 307 փաստաթուղթը): Այդ միջադեպի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու համար տե՛ս նույն տեղում, էջ 310-311 (թիվ 306 փաստաթուղթը): Հմտ. **Vierbücher H.**, Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg, 1930, S. 75; **Lepsius J.**, Der Prozeß Teilirian-Talaat, „Der Orient“, 1921, S. 70:

կան է, ի դեպ, որ գեներալ-լեյտենանտ Լ. Ֆոն Սանդերսը, որը մինչև Թուրքիա մեկնելը Կասեղում գտնվող 22-րդ դիվիզիայի հրամանատարն էր, ժամանակակիցների վկայությամբ իր պաշտոնակիցների շրջանում ուներ կարգապահ, ինքնավստահ, ուղղամիտ և միաժամանակ մանրախնդիր, մեծամիտ, անտակտ և, ընդհանուր առմամբ, դիվանագիտական վարվեցողության հմտություններից զուրկ անձնավորության համբավ¹: Ուստի պատահական չէ, որ երբ նա, ընդունելով Թուրքիայում գերմանական ռազմական առաքելությունը ղեկավարելու վերաբերյալ 1913 թ. հունիսի 15-ին կայսեր կողմից կատարված առաջարկը, մեկնեց Թուրքիա, դեսպան Վանգենհայմն այդ փաստն ընդունեց մեծ անհանգստությամբ՝ վրդովված արձանագրելով, որ ռազմական առաքելության ղեկավարի պաշտոնի համար բոլոր հավանական թեկնածուներից ընտրվել է քաղաքականապես ամենապաշնորհը²: Ուշագրավ է նաև, որ Լ. Ֆոն Սանդերսի նշանակումից հետո ինչպես դեսպանության, այնպես և Թուրքիայի ռազմական նախարարության հետ ռազմական առաքելության փոխհարաբերություններում տևական և մեծ լարվածություն առաջացավ. վերջին իրողությունն առավելապես պայմանավորված էր Էնվերի և գեներալի միջև մշտապես առկա անձնական լարվածությամբ³:

Իրադրությունը «շտկելու» նպատակով Վանգենհայմը ձգտում էր Լ. Ֆոն Սանդերսին փոխարինել ֆելդմարշալ Կոլմար Ֆոն դեր Գոլթցով, որը դեռևս 1883-1895 թթ. որպես ռազմական կրթության կազմակերպիչ լայն գործունեություն էր ծավալել Թուրքիայում՝ 1885 թ. ստանձնելով նաև Օսմանյան պետությունում գերմանական ռազմական առաքելության ղեկավարի պարտականությունները⁴: 1896 թ. թուրքական մարշալի կարգավիճակով Գերմանիա վերադառնալուց հետո նա կայսրից ստացել էր նաև ֆելդմարշալի աստիճան և 1909-1913 թթ. բազմիցս մեկնել Թուրքիա՝ օսմանյան բանակի ռազմական պատրաստվածությունն ամրապնդելու նպատակով⁵:

Վանգենհայմի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, և 72-ամյա Ֆոն դեր Գոլթցը, որն այդ ժամանակ Բելգիայում կատարում էր գլխավոր նահանգապետի պարտականությունները, 1914 թ. դեկտեմբերին մեկնեց Կ. Պոլիս: Դեսպանը, սակայն, անկարող եղավ ռազմական առաքելության գործող ղեկավար Լ. Ֆոն Սանդերսին պաշտոնանկ անելու: Ուստի նա ձգտում էր հնարավորինս սահմանափակել նրա ազդեցության ոլորտները, և պատահական չէ, որ Ֆոն դեր Գոլթցը, որը դեկտեմբերի 12-ին արդեն Թուրքիայում էր,

¹ Տե՛ս **Tamcke M.**, Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996, S. 44:

² Տե՛ս **Wallach J. L.**, Anatomie einer Militärhilfe – die preussisch-deutschen Militärmissionen in der Türkei 1835-1939, Düsseldorf, 1979, S. 137:

³ Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 45:

⁴ Տե՛ս **Силин А. А.**, Германская военная миссия фон дер Гольца в 1882-1895 гг. (Из истории проникновения Германии в Турцию в конце XIX в.) // Ученые записки по новой и новейшей истории, вып. II, М., 1956, с. 318-398:

⁵ Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 46.

առանց ռազմական առաքելության ենթակայության ներքո դրվելու՝ 1915 թ. փետրվարին նշանակվեց թուրքական ռազմական գլխավոր շտաբի խորհրդական և, բացի այդ, ապրիլին ստանձնեց նաև 1-ին, իսկ աշնանը՝ 6-րդ բանակի, ներառյալ նաև Պարսկաստանում ու Աֆղանստանում տեղակայված գերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունները¹:

Թուրքական ազդեցությունը ֆելդմարշալի վրա, այնուամենայնիվ, այնքան էր ակնհայտ, որ, ինչպես վկայում էին ժամանակակիցները, առժամանակ անց նրա հանդեպ անվստահություն առաջացավ նույնիսկ Կ. Պոլսի գերմանական ղեկավար շրջաններում², որտեղ նա ձեռք էր բերել «թուրքացած» անձի համարում: «Օեր զորավարին,- նշում էր Հ. ֆոն Կիսլինգը,- առաջին հերթին այն բանի համար էին պախարակում, որ նա կատարելապես թուրքացել էր և չէր կարողանում պաշտպանել գերմանական շահերը թուրքական ընչաքաղցությունից»³: Այդ անվստահության հետևանքով գերմանացի զինվորականներ էին հաճախակի ուղարկվում Բաղդադ՝ նրա մասին տեղեկագրեր պատրաստելու համար, և, բացի այդ, որպես գերմանական շտաբի պետ, նրան կցվեց նաև գեներալ մայոր Գերոլդ ֆոն Գլայխը, որի կարծիքը հաստատում էր վերոնշյալը: «Գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարությունն այն տեսակետին էր, որ թուրքերի ազդեցությունը ֆելդմարշալի վրա ավելի մեծացել էր, քան նվազել,- հաղորդում էր նա այդ առնչությամբ: - Իմ հետագա սպավորություններն անմիջապես հաստատեցին այդ կարծիքը»⁴:

Եթե ֆելդմարշալին թուրքական ազդեցություն էր վերագրվում նույնիսկ Գերմանիայի շահերը պաշտպանելու հարցում, ապա ավելի քան ակնբախ է, թե որքան մեծ պետք է լիներ այն հայ ժողովրդին վերաբերող խնդիրներում: Այս ամենը նկատի առնելիս հասկանալի կդառնա, որ, ինչպես 1918 թ. տեղեկացնում էր "Deutsch-Armenische Korrespondenz"-ը, ֆոն դեր Գոլթը նույնիսկ եղել է հայ ժողովրդի տեղահանության ծրագրի կողմնակիցը⁵, թեպետ երիտթուրքերի բուն դիտավորություններին դեռևս իրազեկ չի եղել: Հասկանալի է նաև, որ եթե ֆելդմարշալն ընդհուպ իր սեփական հրաժարականի հեռանկարով 1915 թ. դեկտեմբերին կարողացավ կանխել Մոսուլի, ինչպես նաև այնտեղ գտնվող՝ Բաղդադի հայերի տեղահանությունը, այնուամենայնիվ դա շատ էր զիջում այն ամենին, ինչ նա կարող էր անել իր հնարավորությունների սահմանում:

¹ Տե՛ս **Kießling H. von**, Mit Generalfeldmarschall von der Goltz Pascha in Mesopotamien und Persien, Leipzig, 1922, S. 16, 18-20: Հմմտ. **Tamcke M.**, op. cit., S. 46:

² Խոսքը, թերևս, վերաբերում է Ռազմական առաքելությանը և Վանզենհայմին հաջորդած նոր դեսպանին՝ Մետեռնիխին:

³ **Kießling H. von**, op. cit., S. 109.

⁴ **Gleich G. von**, Vom Balkan nach Bagdad, Berlin, 1921, S. 73.

⁵ Տե՛ս **Օհանջանյան Ա.**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ, Երևան, 1997, էջ 222:

Ի դեպ, վերոհիշյալը փոքր-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու համար հարկ է մանրամասնել, որ երբ 1915 թ. դեկտեմբերին որոշում կայացվեց Մոսուլում գտնվող հայերին տեղահանելու և դեպի Եփրատի կողմերն ուղարկելու մասին, ֆոն դեր Գոլթցը «ռազմական տեսանկյունից այդ՝ ամենևին չարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ տեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց գրեթե մի ամբողջ ամիս,- նշում էր ժամանակակիցը,- և ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի սպասեին: Երբ մինչև հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չտրվեց, ֆելդմարշալը, ելնելով իր՝ իբրև գլխավոր հրամանատարի իրավասություններից, Մոսուլի կուսակալին արգելեց տեղահանել հայերին: Կուսակալն այդ մասին կրկին տեղեկություն հաղորդեց Կ. Պոլիս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չհետևեց: Ապա մի տեղեկություն ստացվեց այն մասին, որ կառավարությունը հետամուտ է տեղահանման անհրաժեշտությանը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով անմիջապես ներկայացրեց իր հրաժարականը: Միայն այդ ժամանակ էնվեր փաշան մի գաղտնի հեռագրով հավաստիացրեց, որ Մոսուլի հայերը կմնան այնտեղ և ֆելդմարշալին ի միջի այլոց նաև հայտնում էր, որ նրա՝ իբրև գլխավոր հրամանատարի լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտելու թուրքական կայսրության ներքին գործերին»¹:

Էնվերի այդ նախագուշացումը, իհարկե, միանգամայն անհիմն էր, քանզի, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի տեղահանության ծրագիրը երիտթուրքական կառավարության կողմից պատճառաբանվում էր բացառապես ռազմավարական պատրվակներով, ապա կասկած չի կարող հարուցել, որ Թուրքիայում գտնվող գերմանական բարձրաստիճան զինվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում, ռազմավարական նկատառումներով ամենևին չարդարացվող այդ ծրագիրը մեծ մասամբ կամ ամբողջովին արգելելու բոլոր հնարավորություններն ուներ, և պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլթցը Մոսուլի, այնպես և Լ. ֆոն Սանդերսը Զմյուռնիայի հայերի տեղահանման արգելքները հիմնավորում էին հենց ռազմավարական նկատառումներով:

Այն, որ պաշտոնական Գերմանիայի կողմից որպես «արդարացում»՝ դաշինքի խզման վկայակոչումը միանգամայն սնանկ էր, պարզորոշ վկայում էր նաև Վանգենհայմին հաջորդած նոր դեսպանը՝ կոմս Վոլֆ Մետեռնիխը, որը, Կ. Պոլսում պաշտոնավարությունը ստանձնելով 1915 թ. նոյեմբերի 15-ից, ի տարբերություն իր նախորդի, փորձեց գործադրել բոլոր հնարավորու-

¹ Deutschland und Armenien, S. 218-219: Ֆոն դեր Գոլթցը, ի դեպ, հիվանդանալով բժավոր տիֆով, մահացել է Կուլթ էլ Ամարայի մոտ 1916 թ. ապրիլի 19-ին: Հիվանդության շրջանում՝ մասնավորապես ապրիլի 8-15-ն ընկած ժամանակամիջոցում, նրան խնամել է նաև Արմին Վեգները: Տե՛ս **Tamcke M.**, op. cit., S. 59:

թյունները դեռ կենդանի արքայալուսերին օգնելու և երիտթուրքերի հայաս-
պան քաղաքականությունը կասեցնելու համար, չնայած այն արդեն թևակո-
խել էր վերջին փուլը: «Նաև մեր մամուլը պետք է վրդովմունք հայտնի հայերի
հավածանքների հանդեպ և դադարի թուրքերին քծնել,- նշում էր նա 1915 թ.
դեկտեմբերի 7-ին կանցլեր Բ. Հովվեգին հղած իր զեկուցագրում: - Այն, ինչ
նրանք անում են (նկատի ունի Թուրքիայի ռազմական գործողությունները –
Ս. Հ.) մեր գործն է, մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր դրամը: Առանց
մեր օգնության այդ փքված գորտը կփռվի: Մենք ամենևին կարիք չունենք
այդքան երկյուղած վերաբերվելու թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կա-
րող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարու-
թյունն *այժմյան* իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի:
Դա ավելի շուտ հնարավոր կլիներ Ջեմալի հետ, եթե նա (ինչը բացառված չէ)
Էնվերին դուրս մղեր: Անգլիական կառավարությունը տարիներ ի վեր փոր-
ձում է Էնվերին տապալել: Չափազանց անհավանական է, որ նա *այժմյան*
իշխանավորների հետ սեպարատ հաշտության ձգտի: Առավել ևս անհավա-
նական է, որ նա Էնվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության
հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճա-
նապարհներ: Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք
պետք է թուրքական կառավարությանը երկյուղ ներշնչենք հետևանքների
հանդեպ: Եթե մենք, ռազմական նկատառումներից ելնելով, չհամար-
ձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան
հետագա անարդյունք բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի չարացնում են,
քան օգուտ տալիս, դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում
սպանողը»¹ (ընդգծումները հեղինակինն են – Ս. Հ.):

Գերմանիայի վերոնշյալ պաշտոնական տեսակետի սնանկությունը
փաստել են նաև գերմանացի մի շարք հյուպատոսներ և այլ դիվանագետներ,
որոնք, հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների
բնույթը, ծրագրայնությունը, ընթացքն ու հրեշավոր ենթատեքստը և հերքե-
լով հայ ժողովրդի տեղահանության ռազմավարական «հիմնավորումները»,
հաճախ նաև իրենց անթաքույց անհամաձայնությունն են հայտնել ոճրա-
գործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անտարբերության և
իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի որդեգրած քաղաքակա-
նության հանդեպ: «Ըստ իմ մինչայժմյան հեռագրային և գրավոր տեղեկա-
տվության,- նշում էր, օրինակ, Հալեպի հյուպատոս Վալտեր Ռոսլերը
կանցլերին հղած՝ 1915 թ. հուլիսի 27-ի թվակիր տեղեկագրում,- կարելի է
փաստարկված համարել, որ թուրքական կառավարությունը փաստացի և
հնարավոր հայկական խարդավանքների դեմ հիմնավորված պաշտպանա-
կան միջոցառումների սահմաններն էապես խախտել է և, առաջին հերթին,
իր կարգադրություններով, որոնք վերաբերում են նաև կանանց ու երեխանե-

¹ Revidierte Lepsius-Edition..., 1915-12-07-DE-001-V փաստաթուղթը:

րին, նա ամենախիստ և ամենադաժան ձևով պարտավորեցրել է իշխանություններին, գիտակցաբար նպատակադրվել է հայ ժողովրդի՝ հնարավորինս մեծ զանգվածներին այնպիսի միջոցներով բնաջնջելու, որոնք փոխ են առնված հնադարից, սակայն անպատվաբեր են մի կառավարության համար, որը ցանկանում է դաշնակցել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ նա մտադրվել է Քառյակի հետ պատերազմի մեջ գտնվելու առիթն օգտագործել հնարավորության սահմաններում սակավաթիվ հայ ազգաբնակչություն թողնելու միջոցով ապագայում Հայկական հարցից ազատվելու համար: Նա փոքրաթիվ մեղավորների հետ զոհաբերել է անմեղների բազմությունները: ... Թուրքական կառավարությունը միանգամայն անմեղ իր հայ հպատակներին պատերազմի գոտուց հեռացնելու անհրաժեշտության պատրվակով հազարներով և տասնյակ հազարներով քշել է անապատ՝ բացառություն չանելով ո՛չ հիվանդների, ո՛չ հղիների և ո՛չ գորակոչված զինվորների ընտանիքների համար..., ոչինչ չի ձեռնարկել նրանց շրջանում բռնկված համաճարակների դեմ, կանանց այնպիսի զրկանքների և հուսահատության մեջ է նետել, որ նրանք իրենց ծծկեր և նորածին երեխաներին նետել են ճանապարհին, իրենց՝ հասունության հասնող աղջիկներին վաճառել, իսկ շատերն իրենց փոքրիկ երեխաների հետ նետվել են գետը: Նա նրանց մատնել է ուղեկցող գորախմբի կամայականություններին և դրանով իսկ՝ անարգանքների ու անպատվության մի գորախմբի, որը տիրացել է աղջիկներին և վաճառել նրանց: Նա նրանց նետել է բեդվինների ձեռքը, որոնք նրանց կողոպտել են և առևանգել: Մեկուսի վայրերում նա տղամարդկանց անօրինաբար ոչնչացրել է և իր զոհերի դիերը կեր դարձրել շների և գիշատիչ թռչունների համար: Նա իբրև թե «աքսորավայր» ուղարկված պատգամավորներին սպանել է, բանտերից ազատել կալանավորներին, հագցրել նրանց զինվորի համազգեստ և ուղարկել այն վայրերը, որտեղով պետք է անցնեին քսորյալները: Նա հավաքագրել է չերքեզ կամավորների և հայերին դարձրել նրանց թիրախը... Հնարավոր չէ՞ր գեթ այսօր կասեցնել հետագա սարսափները և գոնե փրկել Հալեպի վիլայեթի ծովափնյա տարածքների հայերին, որոնց քսորը դեռ առջևում է: ... Մի թե Բեյլանը, Սուլյուկը, Քեսաբը և մյուս շրջանները պատերազմական գոտի են: Մի թե այնտեղ կանանց և երեխաների ներկայությունը վտանգավոր է, չէ՞ որ բոլոր տղամարդիկ գորակոչվել են»¹:

¹ Deutschland und Armenien..., S. 110-111: Հմմտ. թեմային առնչվող մյուս հյուպատոսական տեղեկագրերը Լեփսիոսի “Deutschland und Armenien...” և Վ. Միքայելյանի՝ “Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...” ժողովածուներում: Այդ առիթով իր իսկ կատարած ուսումնասիրությունների հիման վրա ուշագրավ դիտողություն է կատարում նաև ակադեմիկոս Վ. Միքայելյանը. «Այսպես կոչված՝ «հայկական ապստամբությունների», «յրտեսության» և «խռովությունների» աղերսով ևս գերմանացի դիվանագետներն արտահայտել են իրենց կարծիքը: Նրանք բոլորը ժխտում են թուրքական կողմի մեղադրանքները, գտնում, որ դրանք զուտ պրոպագանդիստական միտվածություն ունեն՝ արդարացնելու համար հայերի դեմ գործված բռնություններն ու կոտորածները: Նրանք անվարան փաստարկում էին այն

Ինչևէ, արևմտահայության բնաջնջման՝ երիտթուրքական ծրագրի հիմնական մասը, փաստորեն, իրագործվեց աշխարհամարտի «բարենպաստ» իրադրության «ամենաբարենպաստ» ժամանակաշրջանում, երբ Թուրքիայում գերմանական բարձրագույն դիվանագիտական ներկայացուցչությունը, ի դեմս Վանգենհայմի, այդ ծրագրին հակազդելու գեթ անձնական նպատակամղվածություն չունեի, իսկ առավել ազդեցիկ զինվորական ղեկավարությունը, ի դեմս ֆոն դեր Գուլթցի, կոշտ հակազդման համար բավականաչափ ինքնուրույն չէր: Իսկ դա այնքան էր միանշանակ, որ մինչև իսկ հյուպատոսների և այլ դիվանագետների բազմաթիվ ասհազանգերը ոչնչով չկարողացան իրավիճակը փոխել: Չնայած, ի տարբերություն Վանգենհայմի, Մետեռնիխը վճռականորեն հանդես եկավ ոճրագործությունների դեմ՝ փորձելով համապատասխան դիրքորոշում ձևավորել նաև կառավարությունում, այնուամենայնիվ հայ ժողովրդի տեղահանության և բնաջնջման գործընթացն արդեն հիմնականում ավարտվել էր, և նրա միջամտությունները, այլևս անկարող լինելով կասեցնելու իրենց անպատժելիության հարցում կատարելապես համոզված երիտթուրքերի քաղաքականությունը, պատճառ դարձան Բարձր Դռան հետ նրա փոխհարաբերությունների վատթարացմանը, ինչի հետևանքով թուրքական կողմից գերմանական կառավարությանն ուղղված բողոքների հիման վրա նա ետ կանչվեց: «Թուրքիայի հանդեպ Մետեռնիխը սկզբից ևեթ որոշակի համակրանք չդրսևորեց,- գրում էր Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանության կցորդ Յոզեֆ Պոմյանկովսկին,- և գրավեց առավել քննադատական դիրքորոշում: Նրա համար խիստ անհաճ էր լռությամբ հանդուրժել հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Ի նպաստ հայկական նախճիրի զոհերի նրա բազում միջամտությունները, սակայն, հաջողության չհասան և այնպես պղտորեցին նրա հարաբերությունները թուրքական կառավարության հետ, որ արդեն 1916 թ. ամռանը նրա համագործակցությունը Բ. Դռան հետ դարձավ անհնարին: Կ. Պոլսի գերմանական շրջանները նույնպես գոհ չէին Մետեռնիխից և ձգտում էին գաղտնի զեկուցագրերով թուլացնել նրա դիրքերը Բեռլինում, ինչը կարճ ժամանակում լիովին հաջողվեց: 1916 թ. սեպտեմբերին Էնվերը պաշտոնապես պահանջեց ետ կանչել կոմս Մետեռնիխին, որը և ի կատար անվեց: Հոկտեմբերի 3-ին Մետեռնիխը մեկնեց»¹:

Հարկ է միաժամանակ նշել, որ հայ ժողովրդի բնաջնջման հարցում պաշտոնական Գերմանիայի որդեգրած հանդուրժողական դիրքորոշումն այնուամենայնիվ ունեցել է իր «զարգացման փուլերը»: Սկզբնական շրջա-

իրողությունը, որ պատժիչ ջոկատներն ու ջարդարարները ղեկավարվում էին երիտթուրքական ջեմիետի (կոմիտե) որոշմամբ և պարտավոր էին անառարկելիորեն կատարել այն»: Տե՛ս **Միքայելյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում, 1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 28:

¹ **Pomiankowski J.**, Der Zusammenbruch des ottomanischen Reiches, Wien, 1928, S. 176:

նում՝ առնվազն մինչև 1915 թ. հոկտեմբեր ամիսը, այն, թերևս, ծրագրային բնույթ չէր կրում և դեռ չէր ձևակերպվել որպես քաղաքական հրամայական: Դա հնարավորություն ընձեռեց Լեփսիուսին 1915 թ. հուլիսին ստանալու արտգործնախարարության աջակցությունը՝ Թուրքիա մեկնելու համար, այն դեպքում, երբ դեսպան Վանգենհայմը վճռականորեն ընդդիմանում էր նրա այցին և փորձում նաև արտգործնախարարությանը դրդել՝ խոչընդոտելու և արգելելու Լեփսիուսի մեկնումը: «Բ. Դռան՝ արդեն ամբողջությամբ ի կատար ածվող միջոցառման պարագայում,- գրում էր դեսպանն արտգործնախարարությանն ուղղված իր՝ հունիսի 9-ի թվակիր հեռագրում,- որը ստուգապես հաստատված զանազան փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ, ես այդ այցն առավել ևս այն նկատառումով եմ համարում ժամանակավրեպ, որ... այն կարող է Բ. Դռանը վրդովեցնել, որը, ինչպես ցույց է տալիս նախնական հավաստի զննությունը, կատարելապես դեմ է այդ այցելությանը: Բացի այդ, ես իմ հնարավորությունների սահմանում անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեմ Բ. Դռան չափազանց խիստ միջոցառումները»¹:

Երբ վերադարձից հետո Լեփսիուսը համոզվեց, որ գերմանական կառավարությունը մտադիր չէր ի նպաստ հայերի ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա, վճռեց եղերական իրադարձությունների մասին հասարակայնությանն իրազեկել և փորձել նրա օգնությամբ ազդել քաղաքագետների վրա²: Սեպտեմբերին նա մեկնեց Բազել ու Ժնև և հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով Կ. Պոլսում իր կատարած հետազոտությունների արդյունքների մասին՝ նրանց տրամադրեց նաև իր մոտ գտնվող փաստաթղթերի մի մասը³: "Basler Nachrichten" օրաթերթի սեպտեմբերի 16-ի համարում նա հրատարակեց նաև «Մի ժողովրդի բնաջնջումը» խորագրով անստորագիր հոդված⁴, որտեղ, ամփոփ ներկայացնելով իր դիտարկումների արդյունքները, միաժամանակ տեղեկացնում էր, որ գերմանական կառավարությունը քաջատեղյակ էր այդ ոճրագործություններին և դեմ լինելով դրանց՝ անգոր էր դրանք կանխարգելել⁵: Ինչպես Բեռլին ուղարկած հաղորդագրությունում այդ մասին տեղեկացնում էր Բազելի

¹ Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 135. Դեսպանն իր հուլիսի 2-ի հեռագրում նույնպես արտգործնախարարությանը կոչ էր անում Լեփսիուսին արգելել այդ ուղևորությունը ձեռնարկել, քանի որ այն, ըստ նրա, «հայերի ծանր դրությանը ծանոթանալու հետևանքով» Գերմանիային կարող էր «մեծ անախորժություններ պատճառել» և Գերմանիայի «հետագա՝ ավելի կարևոր շահերին վնասել»: Նույն տեղում, էջ 150:

² Lepsius J., Der Todesgang..., S. XIX.

³ Տե՛ս Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, "Der Orient", 1919, S. 31.

⁴ Տե՛ս Lepsius J., Der Todesgang..., S. XXIV. Հմմտ. Meyer K., Armenien und die Schweiz, Bern, 1974, S. 106:

⁵ Տե՛ս Trumpener U., Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 221:

գերմանական գլխավոր հյուպատոսը, Լեփսիուսի հողվածն այնտեղ ահռելի սենսացիա էր առաջացրել¹: Ավելին, քանի որ շվեյցարական թերթերը բաժանորդներ ունեին նաև Գերմանիայում, հողվածն այնտեղ ևս մատչելի էր դարձել բազմաթիվ ընթերցողների համար, և երբ գերմանական զանգվածային մամուլի հրատարակիչները կառավարությունից պահանջեցին նշված հրապարակման վերաբերյալ դիրքորոշում ցուցաբերել, վերջինիս համար ստեղծվեց բավականին անբարենպաստ կացություն²:

Պաշտոնական Բեռլինն այդ իրավիճակում հարկադրված էր ընդառաջել առաջատար մամուլի ղեկավարների հետ տեղեկատվական հանդիպում ունենալու՝ Լեփսիուսի ցանկությանը, և հոկտեմբերի 5-ին նա ռալիստագի շենքում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև հանդես եկավ մի ընդարձակ զեկուցումով³: Ներկայացնելով արևմտահայության ողբերգական վիճակը՝ հռետորն իր ելույթում մեկ անգամ ևս սուր քննադատության ենթարկեց գերմանական կառավարության անվճարականությունը՝ նշելով, որ հայ ազգաբնակչության բնաջնջմամբ վերանում էր նաև Գերմանիայի տնտեսական և մշակութային ազդեցությունը Թուրքիայի վրա, և այդպիսով, Գերմանիան իր մեղքի բաժնով դառնում էր ոչ թե Թուրքիայի «պարոնը», ինչին նա իրականում արժանի էր, այլ «ծառան»⁴: Հետևաբար, ըստ Լեփսիուսի, Գերմանիան, հանուն իր իսկ ռազմավարական և մշակութային շահերի, պետք է վճարեցնեին հանդես գար ի պաշտպանություն հայ ժողովրդի: Լեփսիուսը կոչ արեց նաև ձեռնպահ մնալ Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ «կեղծ և գունազարդված տեղեկատվություն» հրապարակելուց, ինչը, նրա համոզմամբ, էապես կվնասեր Գերմանիայի բարոյական վարկին աշխարհում⁵:

Չնայած Լեփսիուսի ելույթը կրքոտ բանավեճերի տեղիք տվեց և ընդհանուր առմամբ հակասական գնահատականների արժանացավ, այնուամենայնիվ այն կառավարությանն այնքան էր անհանգստացրել, որ հաջորդ օրը նույն շենքում կազմակերպվեց մամուլի ներկայացուցիչների մի մեծ համաժողով: Արտգործնախարարության աշխատակիցն այստեղ Լեփսիուսի հարցադրումները որակում էր «չափազանցված», թուրքական միջոցառումները բնութագրում՝ սոսկ որպես «Անտանտի խառնակիչ գործունեության արձագանք» և հավաստիացնելով, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայերի համար դիվանագիտական ճանապարհով հնարավոր ամեն բան անել՝ կոչում էր գերծ մնալ Հայկական հարցի հովանավորչությունից⁶:

Կառավարության կողմից նույն օրը ևեթ լրատվամիջոցների ներկայացուցիչներին ուղղվեց նաև հետևյալ հրահանգը. «Հայկական կոտորածների

¹ Տե՛ս նույն տեղում: Հմմտ. **Meyer K.**, op. cit., S. 106:

² Տե՛ս **Feigel U.**, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, S. 214.

³ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang..., S. XXIV: Հմմտ. **Feigel U.**, op. cit., S. 214:

⁴ Տե՛ս **Trumpener U.**, op. cit., p. 223.

⁵ Տե՛ս **Lepsius J.**, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, "Der Orient", 1919, S. 31.

⁶ Տե՛ս **Feigel U.**, op. cit., S. 214-215.

մասին պետք է ասել հետևյալը. Թուրքիայի հետ մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է վտանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննարկվեն: Այդ իսկ պատճառով լռելն առժամանակ հարկ է պարտավորություն համարել: Հետագայում, եթե արտերկրից Գերմանիայի մեղսակցության ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ թուրքերը հայերի պատճառով նրանց դեմ ուժգին գրգռվել էին»¹:

Այս հրահանգով սկզբնավորվեց հայ ժողովրդի ողբերգությունների մասին բոլորին լռություն պարտադրելու մի ծրագրված քաղաքականություն, ինչը հաջողությամբ կիրառվեց ընդհուպ մինչև պատերազմի ավարտը: Բացառություն կազմող միակ անձը, որը բազում զրկանքների, վտանգների, ընդհուպ հայրենիքից տարագրվելու գնով չենթարկվեց այդ պահանջին, դոկտոր Լեփսիուսն էր²:

Այսպիսով, այն հանգամանքը, որ Գերմանիան կարող էր առանց դաշինքը վտանգելու կասեցնել կամ նույնիսկ կանխարգելել Հայոց մեծ եղեռնը, չի կարող կասկածի ենթակա լինել, և դրանից, անշուշտ, ածանցվում է Գերմանիայի համապատասխանատվության, բնականաբար՝ նաև մեղսակցության հանգամանքը, ինչն ըստ հարկի կարող է օգտագործվել Հայոց ցեղասպանությանը վերաբերող քաղաքական գործընթացներում:

Ashot Hayruni – *On German-Turkish Alliance in 1915-1916*

The article gives a critical explanation for the position of imperial Germany towards the Armenian Genocide in the context of military alliance with Turkey. The approaches towards the problem adopted by different German diplomatic and military figures are elucidated. According to various primary sources it is argued that Germany could, without risking the alliance with Turkey, prevent or stop the extermination of the Armenian people, and the “argument” to disrupt the alliance in favour of Armenians in case of hard interference cited by official Germany does not correspond to reality.

¹ Vierbücher H., op. cit., S. 78. Հմմտ. Feigel U., op. cit., S. 214-215:

² Այդ մասին մանրամասն տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 212-322: